ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.02.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ԱՄ-2019/19

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Միեր Անանյանի

Մասնակցությամբ՝ «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ՝

Ն. Թադևոսյանի (լիազորագիր, տրված՝ 20.10.2018թ.)

Վ. Կարապետյանի (լիազորագիր, տրված՝ 11.02.2019թ.)

ՀՀ քննչական կոմիտեի ներկայացուցիչ՝

Մ. Մուրադյանի (լիազորագիր, տրված՝ 14.02.2019թ.)

Քննելով ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար համացանցի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀՔԿ-ԷԱՃԾՁԲ-ԻԿ-19/5» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից 11.02.2019թ. ներկայացված և

12.02.2019թ. վարույթ ընդունված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲՔԱ-ԱՄ-2019/19 բողոք), պարզեցի հետևյալը.

1. «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ -ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) 11.02.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ն մասնակցել է ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից հայտարարված «ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար համացանցի ձեռքբերում» ՀՀՔԿ-ԷԱՃԾՁԲ-ԻԿ-19/5 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգին /այսուհետ՝ Ընթացակարգ կամ Աճուրդ/:

Ընթացակարգի գնման առարկան է հանդիսանում Պատվիրատուի կարիքների համար համացանցի ձեռքբերումը, որը խմբավորված են թվով 10 չափաբաժիններում:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը /այսուհետ՝ Հանձնաժողով/ 29.01.2019թ. աճուրդի արդյունքների ամփոփման նիստի արձանագրությամբ, որը Ընկերությունը ստացել է 05.02.2019թ., հաստատել է ընթացակարգի մասնակիցների էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունների՝ հրավերի պահանջներին բավարարելու փաստը:

Հանձնաժողովը 29.01.2019թ. Աճուրդի արդյունքների ամփոփման նիստում մերժել է Ընկերության ներկայացրած հայտը և 1, 2, 5-10 չափաբաժինների համար առաջին տեղ զբաղեցնող է ճանաչել Ընթացակարգի մյուս մասնակցին՝ «ՋիԷնՍի-Ալֆա» ՓԲԸ-ին, իսկ 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով՝ Աճուրդը չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն:

Հանձնաժողովը 05.02.2019թ. հայտերի արդյունքների հաստատելու մասին նիստում 1, 2, 5-10 չափաբաժինների համար ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչել «ՋիԷնՍի-Ալֆա» ՓԲԸ-ին:

Ընկերությունը գտնում է, որ Հանձնաժողովի կայացրած որոշումը, այն է՝ «ՋիԷնՍի-Ալֆա» ՓԲԸ-ին որպես ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչելու մասին, անհիմն է և չի բխում օրենքի պահանջներից:

17.01.2019թ-ին Ընկերությունը Պատվիրատուից ստացել է Ընթացակարգին մասնակցելու հրավեր: 18.01.2019թ. Ընկերությունը հրավերով սահմանված կարգով, ժամանակին և կից փաստաթղթերով էլեկտրոնային ձևով ներկայացրել է էլեկտրոնային աճուրդում մասնակցելու դիմում-հայտարարություն՝ էլեկտրոնային գնումների (eauction.armeps.am կայքի) համակարգի (այսուհետ նաև՝ Համակարգ) միջոցով: Ընկերությունն իր դիմում-հայտարարության մեջ նշել է, որ ցանկություն ունի մասնակցելու աճուրդի թիվ 1,2,3,4,5,6,7,8,9,10 չափաբաժիններին:

Ընկերությունից բացի Ընթացակարգին մասնակցել է նաև «ՋիԷնՍի-Ալֆա» ՓԲԸ-ն:

Աճուրդի հրավերի (այսուհետ՝ Հրավեր) 1-ին մասի, 7.2 կետով սահմանված է, որ էլեկտրոնային աճուրդը սկսվում է 2019 թվականի հունվարի 28-ին, ժամը՝ 14:00-ին: Հրավերի նույն կետով սահմանված է նաև, որ եթե Աճուրդը սկսելու օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա Աճուրդը սկսվում է տվյալ օրվան հաջորդող աշխատանքային օրվա նույն ժամին:

Ընկերությունը, առաջնորդվելով վերոնշյալ դրույթով և «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքի երկրորդ հոդվածով սահմանված դրույթով, որի համաձայն, հունվարի 28-ը համարվում է Բանակի տոն՝ ոչ աշխատանքային օր, ակնկալում էր, որ Աճուրդը սկսվելու է տվյալ օրվան հաջորդող աշխատանքային օրվա նույն ժամին, այսինքն՝ 2019 թվականի հունվարի 29-ին, ժամը՝ 14:00-ին և պատրաստվում էր մասնակցել Աճուրդին նշված ամսաթվին և ժամին:

Սակայն, աճուրդը՝ 1-ից 6-րդ չափաբաժիններով տեղի է ունեցել ոչ աշխատանքային օրը՝ 28.01.2019թ-ին, ժամը՝ 14:00-ին:

Ընկերությունը, նկատի ունենալով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները, այդ թվում՝ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (այսուհետ՝ Կարգ) և հրավերի դրույթները, վստահ լինելով, որ աճուրդը չի կարող տեղի ունենալ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ պահանջների խախտմամբ, չի մասնակցել 28.01.2019թ-ին,

ժամը՝ 14:00-ին կայացած Աճուրդին: Ընկերությունը, տեղի ունեցած Աճուրդի մասին իմացել է 29.01.2019թին, ժամը՝ 09:00-ին:

Հրավերի 1-ին մասի, 7.3 կետով սահմանված է, որ «6-ից ավել չափաբաժինների դեպքում յուրաքանչյուր հաջորդող 6 չափաբաժնի համար էլեկտրոնային աճուրդը սկսվում է չափաբաժինների նախորդ խմբի էլեկտրոնային աճուրդի կազմակերպման համար սահմանված 30 րոպեն ավարտվելուց անմիջապես հետո: Եթե չափաբաժինների քանակը չի սպառվում մինչև տվյալ աշխատանքային օրվա ժամը 16:00, ապա մնացած չափաբաժինների համար էլեկտրոնային աճուրդ կազմակերպվում է տվյալ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվա ժամը 09:00-ին՝ հաշվի առնելով սույն կետով սահմանված պայմանները:

Ընկերությունը, առաջնորդվելով վերոնշյալ դրույթով և նկատի ունենալով չափաբաժինների քանակը՝ 4 և աճուրդի կազմակերպման համար սահմանված 30 րոպե ժամանակը, ակնկալում էր, որ աճուրդը սկսվելու է չափաբաժինների նախորդ խմբի էլեկտրոնային աճուրդի կազմակերպման համար սահմանված 30 րոպեն ավարտվելուց անմիջապես հետո՝ այսինքն 2019 թվականի հունվարի 29-ին, ժամը 14:30-ի սահմաններում և պատրաստվում էր մասնակցել Աճուրդին նշված ամսաթվին և ժամին:

Սակայն, Աճուրդը՝ 7-ից 10-րդ չափաբաժինների մասով տեղի է ունեցել 2019 թվականի հունվարի 29-ին, ժամը 09:00-ին:

Ընկերությունը, վերը նշված նկատառումներից ելնելով, չի մասնակցել 29.01.2019թ. 09:00-ին կայացած Աճուրդում: Ընկերությունը՝ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների չհամապատասխանող անցկացված Աճուրդի մասին տեղեկություն ստանալով, և քաջատեղյակ լինելով Համակարգի առանձնահատկությունների մասին, դիմել է Պատվիրատուին ստեղծված իրավիճակը շտկելու և համապատասխան քայլեր ձեռնարկվելու պահանջով: Հանձնաժողովին ուղղված այս պահանջը սակայն չի բավարարվել, Հանձնաժողովի կողմից համապատասխան քայլեր չեն ձեռնարկվել, նոր աճուրդը տեղի չի ունեցել, և արդյունքում Ընկերությունը զրկվել է աճուրդին մասնակցելու իրավունքից:

Հանձնաժողովը 29.01.2019թ-ի Աճուրդի արդյունքների ամփոփման նիստում, ինչպես նաև 05.02.2019թ. հայտերի արդյունքների հաստատելու մասին նիստում, հաշվի չառնելով

այն փաստը, որ 1-ից 6-րդ չափաբաժինների մասով Աճուրդը տեղի է ունեցել 2019 թվականի հունվարի 28-ին, իսկ 7-ից 10-րդ չափաբաժինների մասով՝ 2019 թվականի հունվարի 29-ին, ժամը՝ 09:00-ին, մերժել է Ընկերության ներկայացված հայտը և 1, 2, 5-10 չափաբաժինների համար առաջին տեղ զբաղեցնող է ճանաչել Ընթացակարգի մյուս մասնակցին՝ «ՋիԷնՍի-Ալֆա» ՓԲԸ-ին:

Ընդունելով այսպիսի որոշումներ՝ Հանձնաժողովը չի առաջնորդվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված համապատասխան դրույթներով:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 14-րդ կետով սահմանված դրույթի համաձայն. «էլեկտրոնային աճուրդը չի կարող կազմակերպվել ժամը 16:00-ից հետո և ոչ աշխատանքային օրերին: Եթե էլեկտրոնային աճուրդն սկսելու օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա էլեկտրոնային աճուրդը վերահայտարարված է համարվում տվյալ ոչ աշխատանքային օրվան հաջորդող աշխատանքային օրվա նույն ժամին»: Նման դրույթը սահմանված է նաև Հրավերի 1-ին Մասի, 7.2 կետով, որի համաձայն էլեկտրոնային աճուրդը սկսվում է 2019թ-ի հունվարի 28-ին, ժամը՝ 14:00-ին: Հրավերի նույն կետով սահմանված է նաև, որ եթե Աճուրդը սկսելու օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա Աճուրդը սկսվում է տվյալ օրվան հաջորդող աշխատանքային օրվա նույն ժամին:

«Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքի երկրորդ հոդվածով սահմանված դրույթի համապատասխան հունվարի 28-ին նշվում է Բանակի օր՝ ոչ աշխատանքային օր:

Հաշվի առնելով վերոնշյալ դրույթները, Աճուրդը պետք է սկսվեր 2019թ-ի հունվարի 28-ին հաջորդող աշխատանքային օրվա նույն ժամին, այսինքն՝ 2019 թվականի հունվարի 29-ին ժամը 14:00-ին:

Հրավերի 1-ին մասի, 7.3 կետով սահմանված է, որ «6-ից ավել չափաբաժինների դեպքում յուրաքանչյուր հաջորդող 6 չափաբաժնի համար էլեկտրոնային աճուրդը սկսվում է չափաբաժինների նախորդ խմբի էլեկտրոնային աճուրդի կազմակերպման համար սահմանված 30 րոպեն ավարտվելուց անմիջապես հետո:

Հաշվի առնելով վերը նշված դրույթը և նկատի ունենալով չափաբաժինների քանակը՝ 4 և աճուրդի կազմակերպման համար սահմանված 30 րոպե ժամանակը, աճուրդը պետք է սկսվեր չափաբաժինների նախորդ խմբի էլեկտրոնային աճուրդի կազմակերպման համար սահմանված 30 րոպեն ավարտվելուց անմիջապես հետո՝ այսինքն 2019 թվականի հունվարի 29-ին, ժամը՝ 14:30-ի սահմաններում:

28.01.2019թ-ի ժամը՝14:00-ի և 29.01.2019թ. աճուրդների արդյունքների մասին որոշում ընդունելով, Հանձնաժողովը չի կատարել Կարգի և Հրավերի վերը նշված պահաջները:

Կարգի և Հրավերի պահանջները չկատարելու հետևանքով, Ընկերությունը զրկվել է Աճուրդին մասնակցելու իրավունքից: Արդյունքում, խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի /այսուհետ՝ Օրենք/ 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետի պահանջները՝ Ընթացակարգի մասնակիցների համար հավասար պայմանները չի ապահովվել, գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման պահանջները չեն ապահովվել: Աճուրդին ընդամենը մեկ մասնակցի մասնակցելու արդյունքում չի ապահովվել մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքի իրագործումը, որով խախտվել են Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետի պահանջներին:

Այսպիսով, ստացվում է, որ Հանձնաժողովը, չպահպանելով Կարգի և Հրավերի պահանջները, չի կատարել Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետի պահանջները՝ չի առաջնորդվել վերը նշված դրույթներով, որի արդյունքում հանգել է սխալ եզրակացության և կայացրել սխալ որոշում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Ընկերությունը բողոքով խնդրել է Պարտավորեցնել «ՀՀՔԿ-ԷԱՃԾՁԲ-ԻԿ-19/5» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին՝ Աճուրդը 1, 2, 5 -10 չափաբաժինների մասով հայտարարել չկայացած:

«ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 14.02.2019թ. ժամը 11:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքով ներկայացված դիրքորոշումը,

2. ՀՀ քննչական կոմիտեի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ քննչական կոմիտեն 14.02.2019թ. թիվ 08/18/2549-19 գրությամբ հայտնել է, որ ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար համացանցի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀՔԿ-ԷԱՃԾՁԲ-ԻԿ-19/5» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ:

Ընթացակարգի հայտարարությունն ու հրավերը հրապարակվել են 17.01.2019թ. էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով և հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 24.01.2019թ. ժամը 14:00-ն: Համակարգի կողմից հակադարձ աճուրդի անցկացման ժամկետ է սահմանվել 28.01.2019թ. ժամը 14:00-ն (հունվարի 26-ն և 27-ն եղել են շաբաթ և կիրակի), որի մասին նշված է հրավերի 1-ին մասի 7.2 կետում: Հակադարձ աճուրդի ժամանակացույցը 24.01.2019թ. ժամը 14:05-ին համակարգի միջոցով լրացուցիչ հրապարակվել է, համաձայն որի՝ ընթացակարգի 1-6-րդ չափաբաժինների համար Աճուրդի անցկացման մեկնարկը սահմանվել է 28.01.2019թ. ժամը 14:00-ն, իսկ 7-10-րդ չափաբաինների համար՝ 29.01.2019թ. ժամը 09:00-ն:

Ելնելով վերոգրյալից՝ Պատվիրատուն հայտնել է, որ «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ն նախօրոք տեղեկացված է եղել հակադարձ աճուրդի ժամանակացույցի վերաբերյալ և կարող էր մասնակցել աճուրդին, ինչպես արել է մյուս մասնակիցը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 14.02.2019թ. ժամը 11:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ԳԲՔԱ-ԱՄ-2019/19 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ԱՄ-2019/19 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար համացանցի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀՔԿ-ԷԱՃԾՁԲ-ԻԿ-19/5» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որը միավորված է եղել 10 չափաբաժիններում:

2. Աճուրդի հրավերի 7-րդ կետի 7.2 ենթակետի համաձայն՝ Էլեկտրոնային աճուրդը սկսվում է 28.01.2019թ. 14:00-ին:

3. Համաձայն e-auction համակարգում հրապարակված տեղեկատվության՝ հակադարձ էլեկտրոնային աճուրդը սկսվել է 28.01.2019թ. ժամը 14:00-ին, որին մասնակցել է միայն «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ն:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Մհեր Անանյանս, ուսումնասիրելով «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից 11.02.2019թ. ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ քննչական կոմիտեի 14.02.2019թ. թիվ 08/18/2549-19 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

«Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ ***բանակի օր նշվում է հունվարի 28-ին, ոչ աշխատանքային օր:***

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 13-րդ կետի համաձայն՝ Աճուրդն սկսվում է հայտերը ներկայացնելու ժամկետը լրանալու օրվանից հաշված երկրորդ աշխատանքային օրը՝ հրավերով սահմանված ժամին:

Կարգի 14-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդը ***չի կարող կազմակերպվել*** ժամը 16:00-ից հետո և ***ոչ աշխատանքային օրերին: Եթե էլեկտրոնային աճուրդն սկսելու օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա էլեկտրոնային աճուրդը վերահայտարարված է համարվում տվյալ ոչ աշխատանքային օրվան հաջորդող աշխատանքային օրվա նույն ժամին:***

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար համացանցի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀՔԿ-ԷԱՃԾՁԲ-ԻԿ-19/5» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որը միավորված է եղել 10 չափաբաժիններում:

Աճուրդի հրավերի 7-րդ կետի 7.2 ենթակետի համաձայն՝ Էլեկտրոնային աճուրդը սկսվում է 28.01.2019թ. 14:00-ին:

Միևնույն ժամանակ նույն ենթակետով սահմանվել է, որ ***եթե աճուրդը սկսելու օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա աճուրդը սկսվում է տվյալ օրվան հաջորդող աշխատանքային օրվա նույն ժամին: Աճուրդ չի կարող կազմակերպվել ոչ աշխատանքային օրերին:***

Հրավերի նույն կետի 7.3 ենթակետի համաձայն՝ գնման ընթացակարգը 6 չափաբաժնից ավել կազմակերպված լինելու դեպքում էլեկտրոնային աճուրդը կազմակերպվում է միաժամանակ առավելագույնը 6 չափաբաժնի համար: 6-ից ավել չափաբաժինների դեպքում յուրաքանչյուր հաջորդող 6 չափաբաժնի համար էլեկտրոնային աճուրդը սկսվում է չափաբաժինների նախորդ խմբի էլեկտրոնային աճուրդի կազմակերպման համար սահմանված 30 րոպեն ավարտվելուց անմիջապես հետո: Եթե չափաբաժինների քանակը չի սպառվում մինչև տվյալ աշխատանքային օրվա ժամը 16:00, ապա մնացած չափաբաժինների համար էլեկտրոնային աճուրդ

կազմակերպվում է տվյալ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվա ժամը 09:00-ին՝ հաշվի առնելով սույն կետով սահմանված պայմանները:

Համաձայն E-AUCTION համակարգում հրապարակված տեղեկատվության՝ հակադարձ էլեկտրոնային աճուրդը սկսվել է ***28.01.2019թ.*** ժամը 14:00-ին, որին մասնակցել է միայն «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ն:

Միևնույն ժամանակ Աճուրդի մնացած 4 չափաբաժինների համար էլեկտրոնային աճուրդը կազմակերպվել է 29.01.2019թ. ժամը 09:00-ին, որին նույնպես մասնակցել է միայն «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ն:

Այսպիսով, հիմք ընդունելով վերոգրյալն, արձանագրում եմ, որ «ՀՀՔԿ-ԷԱՃԾՁԲ-ԻԿ-19/5» ծածկագրով էլեկտրոնային աճուրդն իրականացվել է Կարգի և հրավերի պահանջների խախտումով, քանի որ Աճուրդը սկսվել է ոչ աշխատանքային օրը՝ 28.01.2019թ., մինչդեռ թե Կարգի և թե հրավերի համաձայն՝ Աճուրդ չի կարող կազմակերպվել ոչ աշխատանքային օրերին, հակառակ դեպքում, եթե աճուրդը սկսելու օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա աճուրդը սկսվում է տվյալ օրվան հաջորդող աշխատանքային օրվա նույն ժամին: Տվյալ դեպքում, համաձայն Կարգի և հրավերի պահանջներին, Աճուրդը պետք է սկսվեր 29.01.2019թ. ժամը 14:00-ին, այսինքն ոչ աշխատանքային օրվան հաջորդող աշխատանքային օրը, հրավերում նշված ժամին:

Մինչդեռ արձանագրում եմ, որ Աճուրդն իրականացվել է Հայաստանի Հանրապետության բանակի օրը, որը համաձայն «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի, ոչ աշխատանքային օր է և որի հետևանքով Աճուրդի 10 չափաբաժինների մասով հայտ ներկայացրած «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ն զրկվել է Աճուրդին մասնակցելու իրավունքից:

Գտնում եմ, որ «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից 11.02.2019թ. ներկայացված բողոքը բավարարել. պարտավորեցնել «ՀՀՔԿ-ԷԱՃԾՁԲ-ԻԿ-19/5» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին՝ Աճուրդը 1-10-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ